Արձանագրություն N 1

Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի
2024 թվականի մարտի 16-ի նիստի

Նախագահում էր՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա. Վարդապետյանը:

Մասնակցում էին՝

Կոլեգիայի անդամներ՝ Ա. Պողոսյանը, Գ. Էլիզբարյանը, Ե. Ավագյանը, Ս. Գալյանը, Լ. Գրիգորյանը, Ռ. Մանուկյանը, Վ. Ավետիսյանը, Ա. Հարությունյանը, Ա. Գրիգորյանը, Ա.Փանոսյանը, Ա. Գևորգյանը, Էդ. Արսենյանը, Ա.Մարուխյանը, Վ.Ռաֆայելյանը, Լ. Չարխիֆալակյանը, Լ. Մանուկյանը, Ս. Ամիրխանյանը, Ս. Հակոբյանը:

Ներկա էին՝ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչության պետի պաշտոնակատար Վ. Ղահրամանյանը, ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Ա. Ժամկոչյանը, ՀՀ զինվորական դատախազի տեղակալները, ՀՀ զինվորական կենտրոնական բաժինների պետերը, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազները, ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարը, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդականներն ու օգնականները:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության դատախազության 2023թ. աշխատանքի արդյունքների ամփոփումը:
2. Առաջին անգամ դատախազի պաշտոն զբաղեցնող դատախազների երդման արարողություն:

1. Օրակարգի 1-ին հարցով զեկուցողներ՝

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներ՝ Ա. Պողոսյան, Լ. Գրիգորյան, Ե. Ավագյան, Ս. Գալյան, Գ.Էլիզբարյան:

Լսեցին՝ Ա. Պողոսյանին, Լ. Գրիգորյանին, Ե. Ավագյանին, Ս. Գալյանին, Գ. Էլիզբարյանին:

Արտահայտվեց՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա. Վարդապետյանը:

Լսելով և քննարկելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներ՝ Ա. Պողոսյանի, Լ. Գրիգորյանի, Ե. Ավագյանի, Ս. Գալյանի և Գ. Էլիզբարյանի զեկուցումները Հայաստանի Հանրապետության դատախազության 2023 թվականի աշխատանքի արդյունքների մասին՝ Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիան նշում է, որ համակարգի մարմինները, իրականացնելով ՀՀ Սահմանադրությամբ և «Դատախազության մասին» ՀՀ օրենքով իրենց վերապահված լիազորությունները, ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրությամբ, ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումներով, զգալի աշխատանք են կատարել հանրապետությունում օրինականությունը պահպանելու և հանցավորության դեմ համակարգված ու արդյունավետ պայքար կազմակերպելու, քննության որակը բարելավելու, հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվության և պատժի անխուսափելիությունն ապահովելու ուղղությամբ:

Այսպես.

2023 թվականին կտրուկ աճել է ինչպես տնտեսական հանցագործությունների քրեական վարույթների թվաքանակը (3946՝ 2291-ով կամ 138.4%-ով ավելի, քան 2022 թվականին), այնպես էլ՝ նույն ժամանակահատվածում ավարտված քրեական վարույթների թիվը՝ կազմելով 564 քրեական վարույթ (281-ով կամ 99.2%-ով ավելի, քան 2022 թվականին):

2023 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության հսկողության ներքո քննվող քրեական վարույթներով (այդ թվում՝ ավարտված), վերականգնվել է 32 մլրդ 303 մլն 526 հազար դրամի վնաս (2022 թվականին՝ 23 մլրդ 185 մլն 788 հազար դրամի վնաս):

Պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազների կողմից 884 քրեական վարույթի նկատմամբ (2022 թվականին՝ 430) իրականացվել է դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում, որից 127-ը

(2022 թվականին՝ 217)՝ կոռուպցիոն բնույթի հանցագործության դեպքերով նախաձեռնված քրեական վարույթներով: Վերոնշյալ 884 քրեական վարույթներից ավարտվել է 217-ը, որից 30-ը՝ 89 անձի վերաբերյալ՝ մեղադրական եզրակացությամբ հանձնվել է իրավասու դատարան (2022 թվականին՝ 17-ը՝ 45 անձի վերաբերյալ):

2023 թվականի ընթացքում արձանագրվել է բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների 5206 դեպք՝ 2022 թվականին արձանագրված 2345 դեպքի դիմաց (դեպքերն աճել են 2861-ով կամ 122,0 % -ով):

2023 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների թիվը կազմել է 4564 դեպք. դեպքերի թիվը 2022 թվականի համեմատ աճել է 2847-ով կամ 165,8%-ով (արձանագրված դեպքերից իրացման նպատակով շրջանառությունը կազմել է 2802 դեպք. դեպքերի թիվը 2022 թվականի համեմատ աճել է 1771-ով կամ 171,8%-ով):

2023 թվականի ընթացքում, Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում, ապօրինի շրջանառությունից առգրավվել է 202 կիլոգրամ 60,038 գրամ տարբեր տեսակի թմրամիջոցներ՝ 2022 թվականի 119 կիլոգրամ 832,29 գրամի դիմաց: 8 քրեական վարույթով արձանագրվել է 5 մլրդ 592 մլն 541 հազար դրամի շրջանառություն: 2023 թվականի ընթացքում վերոնշյալ քրեական վարույթներից 6-ը՝ 15 անձի վերաբերյալ, որոնցով դրամաշրջանառությունը կազմել է շուրջ 3 մլրդ 565 մլն 919 հազար դրամ, մեղադրական եզրակացությամբ հանձնվել են դատարան:

2023 թվականի ընթացքում պետական և համայնքային շահերի պաշտպանության բնագավառում կատարվել է 383 ուսումնասիրություն, հայտնաբերվել՝ 447 իրավախախտում:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ դատախազության կողմից պետական շահերի պաշտպանության ոլորտում կատարված ուսումնասիրություններով արձանագրված ընդհանուր վնասը կազմել է 42 մլրդ 842 մլն 872 հազար դրամ (2022 թվականին՝ 39 մլրդ 945 մլն 824 հազար դրամ):

Ուսումնասիրության արդյունքներով՝ 2023 թվականի ընթացքում ՀՀ դատախազության ստորաբաժանումների կողմից ներկայացվել է հանցանքի մասին 110 հաղորդում, որոնցով նախաձեռնվել են քրեական վարույթներ՝ պաշտոնատար անձանց կողմից լիազորությունների չարաշահման, պաշտոնեական անփութության, կեղծիքի, վստահված գույքը հափշտակելու և այլ հանցագործությունների հատկանիշներով:

Նույն ժամանակահատվածում դատարան է ներկայացվել 342 հայց՝ որոնցից 59 հայց՝ քաղաքացիական դատավարության կարգով, 61 հայց՝ քրեական դատավարության կարգով և 222 հայց՝ վարչական դատավարության կարգով:

Հաշվետու ժամանակահատվածում քրեական վարույթներ են նախաձեռնվել նաև Երևան քաղաքի 14 մանկապարտեզների օտարումների կապակցությամբ:

2023 թվականի ընթացքում արձանագրվել է մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի 8.7%-ով աճ: 7138 դեպքերից 36.6%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 4525-ը կամ 63.3%-ը՝ մարզերում, 3-ով նվազել է սպանության դեպքերի թիվը:

2023 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների էական՝ 17.9%-ով նվազում: Նվազում է արձանագրվել կողոպուտի, բնակարանային գողությունների, վստահված գույքի հափշտակության դեպքերով:

ՀՀ դատախազության կոլեգիան արձանագրում է նաև, որ բարձրացել է օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին ուղարկվող քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդությունների որակը, նվազել են հանձնման միջնորդությունների մերժումները, առաջընթաց է արձանագրվել Եվրոպական միության անդամ պետությունների կողմից հանձնման մասին միջնորդությունները բավարարելու հարցում:

Իրավական ապահովման համատեքստում 2023 թվականի ընթացքում մշակվել են քրեական դատավարության ոլորտին վերաբերող և Դատախազության գործունեությանն առնչվող նորմատիվ-իրավական ակտերի մի շարք նախագծեր, իրավասու պետական մարմիններ է ուղարկվել 10 օրենսդրական նախաձեռնություն:

2023 թվականի ընթացքում իրականացվել է 29 կարգապահական վարույթ՝ 41 դատախազի նկատմամբ, որոնց արդյունքներով՝

8 դատախազի կողմից թույլ տրված թերացումները քննարկվել են օպերատիվ խորհրդակցություններում,

9 դատախազի նկատմամբ գլխավոր դատախազի կողմից որոշում է կայացվել արտահերթ ատեստավորում նշանակելու մասին,

10 դատախազի նկատմամբ նշանակվել է «նկատողություն»,

5 դատախազի նկատմամբ «խիստ նկատողություն»,

1 դատախազի նկատմամբ «դասային աստիճանի իջեցում մեկ աստիճանով»,

2 դատախազի նկատմամբ «պաշտոնից ազատում» կարգապահական տույժերը,

5 դատախազի նկատմամբ իրականացված կարգապահական վարույթների ընթացքում վերջիններս ազատվել են զբաղեցրած պաշտոնից սեփական դիմումի համաձայն:

ՀՀ դատախազության կոլեգիան արձանագրում է նաև, որ հակակոռուպցիոն դատարանի վարույթում է գտնվում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի մասին 102 հայցադիմում, որոնցից 68-ը դատարան է ներկայացվել 2023 թվականի ընթացքում: Նշված 68 հայցադիմումների հայցագների հանրագումարը կազմում է շուրջ 416 մլրդ դրամ (այս փուլում մի շարք գույքերի շուկայական արժեքները դեռևս գնահատված չեն):

Հաշվետու տարվա ընթացքում դատարան ներկայացված հայցերով պահանջվում է հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 810 անշարժ և 155 շարժական գույք, 230 իրավաբանական անձանցում մասնակցություն, 383 մլրդ 522 մլն դրամ:

2023 թվականի ընթացքում Գլխավոր դատախազությունը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործառույթի շրջանակում, կնքել է հաշտության 4 համաձայնություն, որոնցով պետությանն է փոխանցվել 6 անշարժ և 1 շարժական գույք՝ ընդհանուր շուրջ 2 մլրդ 200 մլն դրամ արժեքով, ինչպես նաև շուրջ 79 մլն դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում զինված ուժերի և այլ զորքերի զորամասերում արձանագրվել է 2358 դեպք (2022 թվականին՝ 4570): Արձանագրվել է 2212 դեպքով կամ 48.4%-ով նվազում: Դեպքերից 803-ը կամ 33.5%-ը եղել են պատահարներ (2022 թվականին՝ 2874), 1555-ը կամ 66%-ը ենթադրյալ հանցագործության դեպքեր (2022 թվականին՝ 1696), այդ թվում՝ 847-ը կամ 53.3%-ը՝ զինվորական (2022 թվականին՝ 1028), 708-ը կամ 45.5%-ը՝ այլ հանցագործություններ (2022 թվականի՝ 668):

2023 թվականին վերականգնվել է պետությանը պատճառված 2 մլրդ 482 մլն 453 հազար դրամ վնասը: Վերոնշյալ 2 մլրդ 444 մլն 517 հազար դրամ վնասը վերականգնվել է արտադատական կարգով՝ դատախազական ներգործության միջոցների կիրառման արդյունքում (47 նախազգուշացում է ուղարկվել 45 տնտեսվարող սուբյեկտի):

Գլխավոր դատախազի տեղակալների զեկույցներից հետո ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Լուսինե Մարտիրոսյանը և Դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալ Տաթևիկ Սարուխանյանը ներկայացրեցին 2023 թվականի ընթացքում դատախազների, Դատախազության քաղաքացիական ծառայողների, հայեցողական պաշտոն զբաղեցնող և

քաղաքացիական աշխատանք կատարող անձանց շրջանում անցկացված անանուն հարցման արդյունքները:

Համաձայն արդյունքների՝ հարցմանը մասնակցած դատախազների շուրջ 94%-ին լիովին գոհացնում է իր անմիջական վերադասի ղեկավարման հմտություններն ու արհեստավարժությունը, դատախազները կարծում են, որ Դատախազությունը գրավիչ է որպես գործատու և առկա չէ կադրային հոսունության բարձր ռիսկ, Դատախազության համակարգում վարվող մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականությունը մեծամասամբ ընկալվում է որպես արժանիքահենության, պրոֆեսիոնալիզմի և անաչառության սկզբունքներով առաջնորդվող քաղաքականություն, ստեղծված է առողջ աշխատանքային մթնոլորտ: Որպես հիմնական խնդիր՝ նշվել է ծանրաբեռնվածությունը:

Դատախազության 2023 թվականի աշխատանքների ամփոփումները եզրափակելով՝ հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը շնորհակալություն հայտնեց բոլոր դատախազներին և Դատախազության աշխատակիցներին՝ սրտացավ և նվիրված աշխատանքի համար:

Ելնելով վերոգրյալից՝

ԿՈԼԵԳԻԱՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության դատախազության 2023թ. աշխատանքի արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների զեկույցներն ընդունել ի գիտություն:

2. Օրակարգի 2-րդ հարցով զեկուցող՝

ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալ Տ. Սարուխանյան

Երդման տեքստն ընթերցեցին և ստորագրեցին՝

1. Կարապետ Ստեփանի Սմբատյան - Թիվ 2 կայազորի զինվորական դատախազության դատախազ,
2. Արգամ Արմանի Դալլաքյան - Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ,

3. Գագիկ Արշավիրի Հայրապետյան - Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազի տեղակալ,

4. Վազգեն Կարենի Եդիգարյան - Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ,

5. Արևիկ Ռուդիկի Մարտիրոսյան - Տավուշի մարզի դատախազության դատախազ,

6. Միլենա Ռոբերտի Առուստամյան - Լոռու մարզի դատախազության դատախազ,

7. Թամարա Մեխակի Դավթյան - Շիրակի մարզի դատախազության դատախազ,

8. Հովհաննես Լորիկի Սաֆարյան - Լոռու կայազորի զինվորական դատախազության դատախազ,

9. Միլենա Բաբկենի Թաթոյան - Արմավիրի մարզի դատախազության դատախազ

10. Արթուր Լևոնի Մուսոյան - Արմավիրի մարզի դատախազության դատախազ,

11. Մարիա Արթուրի Հովհաննիսյան - Գեղարքունիքի մարզի դատախազության դատախազ,

12. Սոնա Գրիգորի Հովհաննիսյան - Կոտայքի մարզի դատախազության դատախազ,

13. Նորայր Սամվելի Հարությունյան - Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազ,

14. Աննա Գեղամի Հարությունյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազ,

15. Վահագն Գարիկի Վարդանյան - Լոռու կայազորի զինվորական դատախազության դատախազ,

16. Արտյոմ Ռոբերտի Բաղալյան - Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ,

17. Հրաչյա Դավթի Ասատրյան - Կոտայքի մարզի դատախազության դատախազ,

18. Նիկոլայ Գագիկի Բարսեղյան - Լոռու կայազորի զինվորական դատախազության դատախազ,

19. Հայկ Սերգոյի Մանանդյան - Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ,

20. Խորեն Գևորգի Մեջլումյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ,

21. Արման Վագիֆի Բաղդասարյան - Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության դատախազ,

22. Սաշիկ Արամի Ավետիսյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ,

23. Գեղամ Հովսեփի Մկրտչյան - Արարատի մարզի դատախազության դատախազ,

24. Արտակ Էդուարդի Հովհաննիսյան - Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ,

25. Արտակ Վահրամի Թադևոսյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ,

26. Նարեկ Վահրամի Միերյան - Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ,

27. Դիանա Գևորգի Կյուրեղյան - Արմավիրի մարզի դատախազության դատախազ,

28. Վազգեն Գևորգի Աբրահամյան - Արմավիրի մարզի դատախազության դատախազ,

29. Տիգրան Արթուրի Մուրադյան - Արարատի մարզի դատախազության դատախազ,

30. Յուրիկ Հովսեփի Սրապիոնյան - Սյունիքի մարզի դատախազության դատախազ,

31. Խալուռի Գևորգի Մովսիսյան - Գեղարքունիքի մարզի դատախազության դատախազ,

32. Արսեն Սիսակի Ավետիսյան - Գեղարքունիքի մարզի դատախազության դատախազ,

33. Ռոլանդ Գևորգի Գրիգորյան - Շիրակի մարզի դատախազության դատախազ,

34. Աննա Արայիկի Մկրտչյան - Շիրակի մարզի դատախազության դատախազ,

35. Գոհար Արթուրի Ղուկասյան - Սյունիքի կայազորի զինվորական դատախազության դատախազ,

36. Մանե Մուշեղի Սաֆարյան - Լոռու մարզի դատախազության դատախազ,

37. Հայկուհի Արտաշեսի Մարտիկյան - Երևանի կայազորի զինվորական դատախազության դատախազ,

38. Դավիթ Վարուժանի Թովմասյան - Կոտայքի մարզի դատախազության դատախազ,

39. Մացակ Պետրոսի Փանոսյան - Լոռու մարզի դատախազության դատախազ,

40. Անդրանիկ Թելմանի Ալեքյան - Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ,

41. Կարեն Սերգեի Կարապետյան - Երևանի կայազորի զինվորական դատախազության դատախազ,

42. Արմեն Էմիլի Միքայելյան - Գեղարքունիքի մարզի դատախազության դատախազ,

43. Գալուստ Տիգրանի Ղազարյան - Արմավիրի մարզի դատախազության դատախազ:

ԿՈԼԵԳԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ՝ **Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ
ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ **Մ. ՄԿՐՏՉՅԱՆ**